
ԲԱՅՐՈՆՆԻԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ

Հանրահայտ է, որ XIX դարի Եվրոպայի բանաստեղծներից ոչ մեկն իր ժամանակակիցների վրա չի ունեցել այնպիսի մեծ ազդեցություն, ինչպես Բայրոնը: XIX դարում բայրոնիզմը որպես մի հուժկու ուժ՝ ազատության, կենսասիրության, անհոգության ու սիրո գովքով, իր ոլորտի մեջ էր ներառել արևմուտքի և արևելքի տարբեր լեզուներով ստեղծագործող բանաստեղծներին (Ալֆրեդ դը Մյուսե, Հայնրիխ Հայնե, Ալեքսանդր Պուշկին, Միխայիլ Լերմոնտով, Ադամ Միցկևիչ, Շանդոր Պետեֆի և ուրիշներ), ինչպես նաև արվեստագետներին (Ֆերդինանդ Վիկտոր Էժեն Դելակրուա՝ գեղանկարներ «Հունաստանը Միսոլոնգիի ավերակների վրա և Սարդանապալի մահը», Դոմինիկո Մորելլի՝ գեղանկար «Կոմս Լարա», Ռոբերտ Շուման՝ երաժշտադրամատիկական պատկեր «Մանֆրեդ», Պյոտր Չայկովսկի՝ սիմֆոնիա «Մանֆրեդ», Լուի Հեկտոր Բերլիոզ՝ սիմֆոնիա «Հարոլդ» և այլն): Հետևաբար, միանգամայն իրավացի էր Ա. Պուշկինը՝ նշելով, որ Բայրոնի մահով «...մեզնից սրբնթաց հեռացավ հանճարը, ... մեր մտքերի տիրակալը» և ... «աշխարհը դատարկվեց...»¹:

Նման գայթակղությունից՝ Բայրոնի անմիջական ազդեցությունից, չեն խուսափել նաև հայ բանաստեղծները²: Չնայած հայ-անգլիական գրական առնչությունները ծավալվել են դեռևս XVIII դարի երկրորդ կեսից (հնդկահայ գաղթօջախում), սակայն դրանք XIX դարասկզբից, շնորհիվ Բայրոնի, ում ստեղծագործությունն ու անձնական ճակատագիրն առանձնահատուկ ազդեցություն են ունեցել համաշխարհային գրականության վրա, ստացան միանգամայն նոր որակ: Վստահաբար կարելի է ասել, որ սկսած XIX դարի առաջին քառորդից Բայրոնը հայ գրականության մեջ թողել է իր «հետքը», ունեցել է իր «նշտական ներկայացուցիչը» կամ «ներկայացուցիչները»: Բայրոնի ստեղծագործությունը հայ գրողների վրա թողել է մեծ և բարերար ազդեցություն: Ներթափանցելով հայ գրականության մեջ՝ բայրոնիզմը տարածվել և հաջողությամբ զարգացել է երկար տասնամյակների ընթացքում՝ իր արտա-

¹ А. С. П у ш к и н. Собрание сочинений в десяти томах, Т. II. М., 1981, с. 13–14. Ինչպես նշել է Պուշկինը 1824-ի հոկտեմբերին ռուս բանաստեղծ, գրաքննադատ իշխան Պ. Վյազեմսկուն (1792-1878) հասցեագրած նամակում, Բայրոնի հոգու հանգստության համար նրան է ուղարկում մի փոքրիկ հիշատակ՝ «Օովին» բանաստեղծությունը (տե՛ս նույն հրատարակության IX հատորը՝ էջ 145, 422):

² Ուսումնասիրությունը կատարվել է Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի հովանու ներքո գործող Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի օժանդակությամբ:

ցումը գտնելով հայ գրողների ինչպես աշխարհայացքի, այնպես էլ ինքնուրույն ստեղծագործության և թարգմանությունների մեջ:

Բայրոնիզմը հայ գրականության մեջ արտացոլվել, հարստացել և խորացել է անընդհատ՝ ընդգրկելով հայ բանաստեղծների նորանոր սերունդներ և անուններ՝ Ղևոնդ Ալիշան, Սմբատ Շահագիզ, Միքայել Նալբանդյան, Ռուբեն Որբերյան, Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Միամանթո, Դանիել Վարուժան, Ռուբեն Սևակ, Եղիշե Չարենց, Հրաչյա Հովհաննիսյան, Պարույր Սևակ, Վահագն Դավթյան և շատ ուրիշներ, ովքեր այս կամ այն չափով կրել են Բայրոնի անձի ու ստեղծագործության ազդեցությունը, ինչպես նաև ունեցել են բազմաթիվ նմանություններ ու ընդհանրություններ Բայրոնի կյանքի և ստեղծագործության հետ: Սակայն մեկ հոդվածի սահմաններում անհնարին է անդրադառնալ բոլոր հայ բանաստեղծներին, ուստի այստեղ մենք կքննարկենք հայ գրականության մեջ բայրոնիզմի դրսևորման առանձին դրվագներ, որոնց մանրակրկիտ և խորը վերլուծությունները մեզ հնարավորություն են ընձեռում որոնել ու գտնել հայ քնարերգության մեջ արտացոլված բայրոնիզմին յուրահատուկ հատկանիշներ, բացահայտել տիպաբանական նմանություններ և ընդհանրություններ, ինչպես նաև գուցահեռներ անցկացնել որոշ հայ բանաստեղծների երկերի ու հերոսների և Բայրոնի երկերի ու հերոսների միջև:

Բայրոնի ստեղծագործության հետ հայ գրական-հասարակական մտքի շփումը, բայրոնիզմի դրսևորումը հայ գրականության մեջ բացատրվում է նրա բազմաանկյուն և բազմաբովանդակ ստեղծագործության մեջ տեղ գտած ազատասիրական, հակաբռնակալական պայքարի ձգտումներով, ինչպես նաև անհատականության, ինքնահաստատման գաղափարներով: Բայրոնի պոեզիայի ազատատենչ տրամադրությունները, արդարացի պայքարի ռոմանտիզմը, մարդասիրությունը և լավատեսությունը հայ գրականության մեջ, առանձնապես հայ քաղաքական պոեզիայի վերելքի ժամանակահատվածներում, ըմբռնվել են առավել պարզությամբ, հարագատորեն ու արտասովոր ուժով, արձագանքել են հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին: Այս իմաստով «հայկական» բայրոնիզմը համաշխարհային բայրոնիզմի զարգացման պատմության մեջ գրավում է իր ուրույն և հատուկ տեղը: Չնայած դրան՝ Բայրոնի առաջին թարգմանիչներից մեկը՝ հայ նոր քնարերգության նահապետ Ղևոնդ Ալիշանը, մեծարելով Բայրոնին և անվանելով նրան ոչ միայն դարի լավագույն բանաստեղծ, «այլև առաջին ի նոսին վկայեալ է իր յուրվից գիտնոց», միաժամանակ չի բաժանում նրա թախժամոլության արտահայտությունները «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի մեջ, որի չորրորդ նվագը թարգմանել է հայերեն (այն լույս է տեսել Վենետիկում 1860-ին «Իտալիա» վերնագրով, ինչպես նաև վերահրատարակվել է 1889-ին, 1891-ին և 1901-ին): Ղ. Ալիշանն իր թարգմանության մեջ այդ արտահայտությունները կամ զեղչել է, կամ էլ իր վերաբերմունքն է ցույց տվել ծանոթագրության միջոցով:

Այդ նույն ժամանակահատվածում Կալկաթայում՝ հայ գրող, մանկավարժ, հրապարակախոս, Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի նախկին սան Մեսրոպ Թադիադյանի (1803–1858) «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» պարբերականներում հաճախ ենք հանդիպում Շեքսպիրի, Բայրոնի, Բայզակի, Լոնգֆելդի անունների հիշատակմանը, ինչպես նաև նրանց առանձին ստեղծագործությունների կամ դրանցից վերցրած հատվածների հայերեն թարգմանություններին: Այդ ստեղծագործությունները համապատասխանում էին ինչպես Հայաստանում, այնպես էլ հայ գաղթավայրերում XIX դարի առաջին կեսին, երբ ցայտուն է դառնում գրականության աշխարհականացումը և մերձեցումը իրականությանը, հասարակական նոր հարաբերությունների պայմաններում ձևավորվող հայ ընթերցողի հոգևոր պահանջներին, տրամադրություններին և ազգային-ազատագրական ձգտումներին: Այսպես՝ Մ. Թադիադյանի՝ Բայրոնի, որին նա համարում էր գրական մեծության չափանիշ, ստեղծագործություններից կատարած թարգմանություններում («Բցէ՛ թէ տղայ միամիտ էի», «Տեսի զքեզ, ո՛հ, յարտասուս»), որոնք լույս են տեսել 1848-ին և 1850-ին «Ազգասեր Արարատյան» պարբերականում³, զգացվում է բայրոնական տրամադրություն՝ բողոք և հուսախաբություն, ավստանք ու վրդովմունք, կյանքի հարվածներ և շրջապատի անտարբերություն:

Մեքատ Շահազիզը հայ իրականության մեջ առաջիններից մեկն էր, որի գրական գործունեության վրա որոշակի ազդեցություն թողեց Բայրոնի քնարերգությունը: Այսպես, դեռևս 1860-ին Մոսկվայում լույս է տեսնում քսանամյա Մ. Շահազիզի բանաստեղծությունների առաջին գիրքը՝ «Ազատության ժամեր» խորագրով⁴, որտեղ հեղինակը, Բայրոնի «Պարապության ժամեր» ժողովածուի նմանությամբ, գովերգում է իր ծննդավայրն ու հեռավոր հայրենիքը, ուսանողական օրերն ու պատանեկան սիրո հույզերը: Բայրոնիզմն իր արտահայտությունն է գտել նաև Մ. Շահազիզի «Լեռնի վիշտը»⁵ պոեմում, որը կառուցվածքով, պատմելաձևով, բովանդակությամբ և գլխավոր հերոսին համակած թախծի զգացումով շատ ընդհանուր եզրեր ունի Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի հետ:

Իսկ XIX դարի վերջերին նշանակալի առաջընթաց ապրող հայ պոեզիայի վրա զգալի ազդեցություն է թողնում Բայրոնի ստեղծագործությունը: XIX դարի 90-ական թվականներին և XX դարի սկզբին Բայրոնի ստեղծագործությունները (շատ բանաստեղծություններ «Երբայական մեղեդիներ» շարքից, հատվածներ «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունից» և «Դոն ժուանից», առանձին բանաստեղծություններ, «Շիլլոնի կալանավորը», «Ծովահենը») ավելի շատ են թարգմանվել հայերեն ու դարձել քննարկման առարկա, քան որևէ այլ ժամանակահատվածում: Հայ գրաքննադատների ուսումնասիրությո-

³ «Ազգասեր Արարատյան», 1848, № 2, էջ 16, 1850, № 50, էջ 400:

⁴ Մեքատայ Շահազիզեանց Ազատութեան ժամեր, Մոսկվա, 1860:

⁵ Մեքատայ Շահազիզեան Լեռնի վիշտը (Ժամանակակից վեպը չորս գլուխ բաժանուած եւ գանազան բանաստեղծութիւններ), Մոսկուա, 1865:

յուններում Բայրոնը գնահատվում էր որպես ամենամեծ ռոմանտիկ, իսկ Բայրոնիզմն իր մեջ ամփոփում էր ռոմանտիզմի գրեթե ամբողջ էությունը:

Այդ ժամանակաշրջանում Բայրոնի քնարերգությանը դիմելը՝ «Շիլլոնի կալանավորի», «Չայլդ Հարոլդի ուխտագնացության» առանձին հատվածների թարգմանությունները, ինչպես նաև «Բայրոնին» բանաստեղծությունը գրելը հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի համար պատահական երևույթ չէին և ոչ էլ ակնթարթային տարվածության արդյունք: Ընդհանրապես, 1894–1898 թթ. Հ. Թումանյանի ստեղծագործական կյանքում համարվել են Բայրոնյան շրջան: Այդ մասին հիշատակում է նաև ինքը՝ Թումանյանը, 1902-ի հոկտեմբերի 27-ին Լեոյին ուղղված նամակում. «Ես անգիտակցաբար ենթարկված եմ եղել ազդեցությունների, որոնց մասին, մինչև օրս հաշիվ չեմ տվել ինձ... ծանոթացել ու սիրել եմ Բայրոն, Գյոթե, Շեքսպիր: Սրանք կարծում եմ, անպայման ազդել են իմ գրվածքների վրա, բայց այնպիսի գրվածքների, որ տակավին չեն տպագրված, մինչև անգամ չեն վերջացած և որոնց մասին հաշիվ չեմ կարող տալ: Մակայն զգում եմ նրանց անմերժելի ազդեցությունը»⁶: Թումանյանն այնքան է համոզուած եղել Բայրոնի ստեղծագործությամբ, որ, ինչպես վերհիշում են նրա ժամանակակիցները, անզլերեն դասեր է առնում Թիֆլիսի անգլիական փոխհյուպատոս Մուրտադից, որպեսզի կարողանա «Շիլլոնի կալանավորը» պոեմը թարգմանել բնագրից: Անգլիացի բանաստեղծի ազատատենչ ոգին համընկնում էր Թումանյանի այդ շրջանի խոհերի ու տրամադրությունների հետ և արտացոլվում նրա մի շարք ստեղծագործություններում: Ինչպես հայտնի է, 1816-ին Անգլիայից հեռանալուց հետո, Բայրոնի ամբողջ քնարերգությունը լի է խռովահույզ, ըմբոստ գաղափարներով: «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» և «Ծովահենը» պոեմներում արդեն զգացվում է այդ տրամադրությունը, սակայն այն ավելի ուժգին և կրքոտ է հնչում նրա կյանքի վերջին տարիներին, երբ ռոմանտիկ բանաստեղծը մտել էր սերտ կապի մեջ իրական կյանքի հետ և ավելի մոտ էր կանգնած քաղաքական պայքարին՝ դրա մեջ տեսնելով իր կոչումն ու գործը: Բայրոնը դառնում է տառապած ժողովուրդների ազատագրական պայքարի ոչ միայն ակնատեսը, այլև անմիջական մասնակիցը: Մեկը մյուսին են հաջորդում նրա ազատաշունչ քնարերգության գլուխգործոցները՝ լի ազատության ձգտումով և պայքարի կենդանի զգացումով: Բայրոնի «Երբ մարդ չունի ազատություն» (1820), «Հունաստանին» (1824) և «Այսօր լրանում է իմ երեսունվեց տարին» (1824) բանաստեղծությունները, ինչպես նաև «Կեֆալոնյան օրագրում» (1823) գրի առնված տողերը, լի են անհողողող արիությամբ և պարտքի զգացումով: Անգլիացի բանաստեղծի՝ ժողովուրդների ազատության համար պայքարի անմիջական մասնակցի ռազմատենչ ոգին թանկ է եղել Թումանյանի համար, քանի որ 1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում արդեն սկսվել էին հայկական ազատագրական պայքարի շարժումները, հայոց կոտորածները: Եվ բնական է, որ «հայոց վշտի» երգչին հարազատ էր «հա-

⁶ Հ. Թումանյան. Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1969, էջ 366:

մաշխարհային վշտի» երգչի թախիծը: Այդ տարիներին Թումանյանը գրում է «Իսրայել» (1890), «Քրիստոսն անապատում» (1892), «Գաղթականի երգը» (1896), «Տրտմության սաղմոսներից» (1898), «Պանդուխտ եմ, քույրիկ» (1902), «Հայոց լեռներում» (1902), «Հայոց վիշտը» (1903), իսկ ավելի ուշ՝ «Ընտրյալը» (1907) և «Գերության մեջ» (1916) բանաստեղծությունները:

Արևմտահայ բանաստեղծ Ռուբեն Որբերյանի «Ծփանքներ» պոեմը, որն առաջին անգամ տպագրվել է 1906-ին⁷, ինչպես և Ս. Շահագիզի «Լևոնի վիշտը» պոեմը, նույնպես գրվել է «Չայլդ Հարուդի ուխտագնացությունը» պոեմի ազդեցության տակ: Ռ. Որբերյանի պոեմի նախերգանքն ամբողջությամբ նվիրված է Բայրոնին: Այդ ստեղծագործության մեջ պատկերվում են հայ ժողովրդի կրած տառապանքները, նշվում մեր ճնշված, թշվառ հայրենիքի փրկության ու ազատության ուղիները, իսկ անգլիացի բանաստեղծի կերպարն ուրվագծվում է կենսագրական հաջորդականությամբ՝ այն երկրների ֆոնի վրա, որտեղ եղել է՝ նշելով նրա կյանքի և ուխտագնացության բոլոր փուլերը:

Չուզահեռներ անցկացնելով Բայրոնի և հայ մեծ բանաստեղծ, արձակագիր ու հասարակական գործիչ Ավետիք Բասահյանի վաղ շրջանի (հիմնականում՝ մինչև «բայրոնյան» տարիքի) ստեղծագործությունների միջև՝ նույնպես նկատում ենք մի շարք ընդհանրություններ և նմանություններ, չնայած Բասահյանի վրա բայրոնիզմն անմիջական ազդեցություն չի թողել: Նախ, նշենք, որ Բասահյանը, ինչպես և Բայրոնը, իր ժամանակակիցների մոտ մեծ բանաստեղծի համբավ է ունեցել: Դեռևս 1916-ի հունվարի 28-ին ռուս բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը ռուս քննադատ և բանաստեղծ Ալեքսանդր Իզմայլովին հասցեագրած նամակում նշում է, որ «Բասահյանն առաջնակարգ բանաստեղծ է. այժմ, միգուցե, այդպիսի յուրօրինակ և անմիջական տաղանդ չկա ամբողջ Եվրոպայում»⁸, իսկ Լուի Արագոնն էլ Բասահյանին անվանում է «այս հարյուրամյակի մեծագույն բանաստեղծ»⁹: Բասահյանի և Բայրոնի անձնական կյանքում էլ շատ նմանություններ և ընդհանրություններ կան: Երկուսն էլ, խուսափելով հալածանքներից, հեռացել են հայրենիքից և երկար տարիներ ապրել վտարանդության մեջ՝ Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Հունաստան: Ինչպես և Բայրոնին, Բասահյանին նույնպես չի հաջողվել ամուսնանալ իր սիրած էակի հետ, ում սիրել է անկեղծ ու ազնիվ սիրով, չի մոռացել ամբողջ կյանքի ընթացքում և մինչև իր մահը նվիրել է բանաստեղծություններ: Ինչպես Բայրոնը, Բասահյանն էլ կատարել է օրագրային գրառումներ, որոնց մեջ վավերացրել է սեփական հոգևոր ընդվզումներն ու պոռթկումները, վերլուծություններն ու եզրակացությունները, առանց միտքը կաշկանդելու գրի առել այն, ինչ հարմար է գտել տվյալ պահին: «... գրում եմ խառը՝ ի նչ դուրս գա՝ գա, – անցյալի մասին էլ, ներկային էլ, ապագային էլ՝ այնպես, ինչպես քեֆս ուզում է ...»¹⁰, – գրում է իր հիշատակարանում 18-ամյա

⁷ Ռ. Ա լ ի բ յ ա ն [Ո Ր Բ Ե Ր Յ Ա Ն]. Ծփանքներ, Ճիպուղի, Գահիրե, 1906:

⁸ А л. Б л о к. Собрание сочинений. Т. VIII, Письма 1898–1921. М.–Л., 1963, с. 455–456.

⁹ Л у и А р а г о н. Памяти Аветика Исаакяна. – “Правда”, 21 октября 1957.

¹⁰ Ա. Բ ու ա հ ա կ յ ա ն. Հիշատակարան, Երևան, 1977, էջ 35:

պատանին: Գրեթե համանման գրառում կա Բայրոնի բառարանում. «Իսկ ինչ եմ գրելու ես... Գրի եմ առնելու այն ամենը, ինչ խելքիս փչի...»¹¹ կամ՝ «Գրում եմ՝ ինչ որ կամենում եմ ես...»

Թեև չգիտեմ բառն հաջորդ տողի»¹²:

Կարդալով Բայրոնի և Իսահակյանի ստեղծագործությունները՝ հանգում ենք այն եզրակացության, որ դրանց հերոսները գրողների «ես»-ի ինքնաբացահայտումն ու ինքնահաստատումն են: Բայրոնի «ես»-ը զուգահեռ է ենթադրում Չայլդ Հարոլդի հետ, չնայած Բայրոնը ժխտում է «որևէ հարազատություն նրա հետ»¹³, իսկ Իսահակյանի «ես»-ը՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմի հերոսի հետ, ինչպես ինքն է խոստովանում՝ «...այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն դա ուրիշի վերարկուի տակ»¹⁴: Մեկ ուրիշ առիթով, խոսելով դրա մասին, Իսահակյանն ընդհանրացնում է. «Իմ գրվածքների մեջ ես իմ հոգին եմ նկարում»¹⁵: Նույնը նշում է ռուս մեծ բանաստեղծ Ա. Պուշկինը Բայրոնի մասին իր «Բայրոնի դրամաների մասին» ուրվագրում. «Բայրոնը միակողմանի հայացք է նետել աշխարհի և մարդկության էության վրա, ապա շուտ եկել դրանցից և խորասուզվել ինքն իր մեջ: Նա ներկայացրել է մեզ իր իսկ ուրվականը: Նա իրեն ստեղծել է երկրորդ անգամ՝ մերթ ուրացյալի գլխափաթեղի տակ, մերթ ծովահենի թիկնոցի մեջ, մերթ գյավուրի տեսքով՝ սքեմի տակ շունչը փչելիս, մերթ, վերջապես, որպես թափառական... Վերջիվերջո նա ըմբռնել, ստեղծել և նկարագրել է մի (հենց իր) կերպար... Երբ նա սկսել է գրել իր ողբերգությունը, ապա յուրաքանչյուր գործող անձին տվել է մեկական բաղկացուցիչ մաս իր թախծոտ և ուժեղ կերպարից, և, այսպիսով, իր վեհասքանչ էությունը բաժան-բաժան արել մի քանի մանր և աննշան անձանց միջև»¹⁶:

Բայրոնի «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» և Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմների հերոսներն էլ, հիասթափվելով առօրյա կյանքից, մարդկային հարաբերություններից, դիմում են ճանապարհորդության: Այդ երկու պոեմներն էլ հեղինակները գրել են երիտասարդ տարիքում: Դրանք թարգմանվել են աշխարհի բազմաթիվ լեզուներով: Համեմատելով այդ պոեմ-

¹¹ Byron's Letters and Journals, Selected and Edited by Jeffrey D. Hooper, Chapter 8: "The king-times are fast finishing" – Sept. 22. 1820 – Jan. 27. 1822, <http://engphil.astate.edu/gallery/byron9.html>, "My Dictionary", May 1821 and Detached Thoughts, 15 Oct. 1821 – 18 May 1822, Ravenna May 1st 1821. – Б а й р о н. Дневники. Письма. М., 1963, с. 236.

¹² B y r o n. Don Juan, Canto IX, stanza XLI (անգլերենից թարգմանեց Հենրիկ Սևանը, Ջ ո թ ը Գ ո թ դ ո ն ի Բ ա յ ը ո ն. Դոն Շուան, Երևան, 1988, էջ 322):

¹³ Byron's letter to R. Ch. Dallas on the October 31st 1811 (see e. g. Famous in my time: Byron's Letters and Journals, edited by Leslie A. Marchand, vol. 2: 1810–1812, The Belknap Press of Harvard University Press, Cambridge. Massachusetts, 1973, p. 122). – Б а й р о н. Дневники. Письма, с. 38.

¹⁴ Ա. Ա դ ա մ յ ա ն. Ավետիք Իսահակյանի նամակները Կարեն Միքայելյանին.– ՊԲՀ, 1973, № 2, էջ 235:

¹⁵ Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Խոսացումներ.– «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 3, էջ 44:

¹⁶ А. С. П у ш к и н. Собрание сочинений в десяти томах. Т. VI. М., 1981, с. 35.

ների տեքստերը՝ կարելի է գտնել մի շարք նմանություններ և ընդհանուր գնահատականներ: Բերենք այդպիսի մի քանի օրինակներ.

Չեմ հավատում ես կանացի
Հատաչանքին խաբուսիկ,
Ա՛խ, կարբի նոր սերն անուշ
Արցունքն աչքից գեղեցիկ¹⁷:

Եվ կինն ի նչ է որ... խորամանկ, խաբող,
առնախանձ մի սարդ, հավերժ
նանրամիտ,
Որ հացդ է սիրում, համբույրի մեջ սուտ
և քո գրկի մեջ գրկում ուրիշին¹⁸:

Կամ՝

Ատում եմ կնոջ՝ տարերքը կրքի,
միշտ բեղմնավորող եղևոնը անսանձ,
Աղբյուրն անսպառ, որ կուտակում է
աշխարհի վրա տիղմը չարության:
Ատում եմ նորից սերն ու կնոջը,
իր համբույրները շողում ու դժնյա, -
Փախչում եմ նրա ճահիճ-մահիճից,
և անիծում եմ երկունքը նրա¹⁹:

Եվ շատերի հետ նա սեղան նստեց,
Բայց, ավա՛ղ, կյանքում մնաց
միայնակ,
Ու նրա ոգին տեսավ, ճանաչեց
Շողորորթ մարդկանց՝ անսիրտ,
հացկատակ...²⁰

Հգորների և մեծատունների հետ սեղան նստեց,
.....
Եվ նրա խորաթափանց ոգին ճանաչեց
մարդուն,
Ճանաչեց և խորագին ատեց մարդուն
Եվ նրա օրենքները²¹:

Կամ՝

Ատում եմ, ինչ որ սիրել եմ առաջ,
ինչ որ տեսել եմ մարդկային հոգում.
Մարդկային հոգում՝ զագիր ու նանիր՝
համրել եմ հազար գարշանք ու նող-
կում²²:

Մի անգամ ևս նշենք, որ վերոհիշյալ երկու պոեմներն էլ գրվել են այն ժամանակ, երբ նրանց հեղինակները եղել են երիտասարդ և համակված ռոմանտիզմի գաղափարներով: Երկու պոեմներն էլ, հիասթափվելով տիրող իրականությունից, մարդկային հարաբերություններից, հեռանում են

¹⁷ Բ ա յ ը ն. Երկերի ժողովածու, Երևան, 1965, էջ 107:

¹⁸ Տե՛ս, օրինակ, Ա վ է տ ի ք Բ ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու վեց հատորով, հ. երկրորդ, Երևան, 1974, էջ 57:

¹⁹ Նույն տեղում, էջ 58:

²⁰ Բ ա յ ը ն. Երկերի ժողովածու, էջ 103-104:

²¹ Ա. Բ ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու վեց հատորով, հ. երկրորդ, էջ 53:

²² Նույն տեղում, էջ 55:

իրենց հայրական տնից և դիմում անորոշություններով լի ճանապարհորդության: Բերենք ևս մեկ-երկու օրինակ.

Ա՛խ, մնաս բարով նա մորը չասաց
Ու փախավ թաքուն հայրենի տնից...²³

Ա՛խ, մնաք բարև չեմ ասում ես ձեզ, իմ հոր
գերեզման, օրոցք մայրական...²⁴

* * *

Եվ ես հիմա կյանքում մենակ,
Թափառում եմ այս ծովում,
.....
Տա՛ր, ինձ, նավա՛կ, քեզ հետ հոգ չե՛ս,
Թե բախտն ինձ ուր կտանի,
Տա՛ր ուր կուգես, միայն թե ես
Չտեսնեմ հողն հայրենի:
Ողջո՛ւյն, ողջո՛ւյն, մութ ալիքներ,
Թե իմ աչքից կորչե՛իք,
Կողջունե՛ի ժայռ, անապատ,
Բարի՛ գիշե՛ր, հայրենի ք՞²⁵:

Տա՛ր ինձ լուսազգեստ, օտար մի եզերք,
հեռու, հեռավոր, մենավոր ափեր.
Սուրբ մենակություն, դո՛ւ, իմ օազիս,
դո՛ւ, երազների աղբյուր գովաբեր²⁶:

Բայրոնի և Բսահակյանի այլ ստեղծագործություններում նույնպես նկատվում են բազմաթիվ նմանություններ ու ընդհանրություններ: Համեմատելով Բայրոնի «Գերության մեջ» (անգլերենում անվերնագիր է) և Բսահակյանի «Իսրայելացիք Բաբելոնում» բանաստեղծությունները, որոնք ներկայացնում են Աստվածաշնչի 137-րդ սաղմոսը՝ հանդիպում ենք բավականին նման տողերի.

Բաբելոնի գետի ափին նստած էինք լուռ ու տխուր,
Հիշում Միոնը հայրենի, մորմոքարով աղեկտուր.
Հիշում էինք օրերն ահեղ, երբ թշնամին վայրագ ու
չար
Ավերակեց Սաղեմը սուրբ, գերեց երկիրը
վայրաբար.
.....
Երբ թշնամին սպառնաց մեզ. «Դե՛, երգերը ձեր
երգեցեք»:
Մեր երգե՛րը, թշնամու մո՞տ, մեր սուրբ երգե՛րը, օ՛,
երբե՛ք...²⁷

- «Ինչո՞ւ եք լալիս...» մեր
գերիչները
Ասում էին մեզ - «ինչո՞ւ չեք
հնչում
Չքնաղ Միօնի անուշ
երգերը...»
Եվ ի՞նչ - մենք մի թե՛ օտար
աստղերի
Ցուցլանքի տակ կարող ենք
երգել...²⁸

²³ Բ ա յ ը ն. Երկերի ժողովածու, էջ 104:
²⁴ Ա. Բ ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. երկրորդ, էջ 55:
²⁵ Բ ա յ ը ն, Երկերի ժողովածու, էջ 107-108:
²⁶ Ա. Բ ս ա հ ա կ յ ա ն, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. երկրորդ, էջ 62:
²⁷ Բ ա յ ը ն. Երկերի ժողովածու, էջ 56:
²⁸ Ա վ. Բ ս ա հ ա կ յ ա ն. Բանաստեղծություններ, Բագու, 1903, էջ 133:

Այս ստղերի նմանությունը միգուցե նույն թեմայի ընտրության արդյունք է: Վերոհիշյալ սաղմոսում, որն իր հայրենիքից վտարված հրեա ժողովրդի դառնը ճակատագրի արտացոլումն է, հրեաները ողբում են իրենց գերեվարությունը: Բնական է, որ այդ թեման, համահունչ լինելով հայ ժողովրդի ազատագրական տենչերին ու ձգտումներին, պետք է որ ստեղծագործական լիցք տար նաև հայ բանաստեղծներին: Սակայն, մեր կարծիքով, հատկապես այդ սաղմոսին անդրադառնալը, առաջին հերթին կապված է հայ բանաստեղծների վրա Բայրոնի թողած ազդեցության հետ: Բացի Իսահակյանից, այդ թեմային անդրադարձել են նաև Բաֆֆին և Թումանյանը: Բաֆֆին սաղմոսի ինն առանձին կետերն արտացոլող իր ինը քառյակից բաղկացած «Իսրայելը Բարելունում» բանաստեղծությունը գրել է 1856-ին: Բերենք մեկական հատված Բայրոնի և Բաֆֆու բանաստեղծություններից.

Չորանա՛ն թող ձեռքերը մեր և լեզուն
մեր լալկի իսպառ,
Թե նրանց մոտ մի երգ հնչենք, թե
շարժենք գեթ տավղի մի լար²⁹:

Իմ աջ ձեռքս թող չորանա,
Երբ մոռանամ քո³⁰ սերն անձառ:
Երբ չըհիշեմ քեզ մի բուպե,
Թո՛ղ իմ լեզուս փակչի քիմքիս,
Եվ հավիտյան թո՛ղ մունջ մնամ,
Երբ քեզ համար չըտամ հոգիս³¹:

Հավանաբար, գտնվելով Բայրոնի բանաստեղծության ազդեցության տակ՝ նույն թվականին Բաֆֆին գրում է մեկ այլ ընդարձակ բանաստեղծություն՝ «Գերին Ավարայրի (Վարդանանց պատերազմի ժամանակ)» խորագրով, որը նվիրված է պարսից բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարին: Այս բանաստեղծության մեջ հանդիպում ենք ճիշտ նույն մտքին.

Թո՛ղ իմ բազուկս չորանա իսպառ,
Թո՛ղ լեզուս լռվի, չըխոսի մի բառ,
Երբ պատերազմում, քո թշնամու դեմ,
Չըզոհեմ արյունս քո սիրո համար³²:

Իսկ Հ. Թումանյանի «Գերության մեջ» բանաստեղծությունը «Նմանություն» ենթավերնագրով առաջին անգամ տպագրվել է 1916-ին³³: Այստեղ նշենք, որ Բայրոնն ավելի հարազատ է մնացել սկզբնաղբյուրին, քան Թումանյանը: Բայրոնի բանաստեղծության մեջ հրեուհիները չեն վերցնում տավիղներն ու չեն երգում, այլ «մորմոքալով աղեկտուր», պարզապես ցավով ու կարոտով են

²⁹ Բ ա յ ը ն. Երկերի ժողովածու, էջ 56:

³⁰ Խոսքը Իսրայելի մասին է:

³¹ Բաֆֆի. Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 8, Երևան, 1957, էջ 9:

³² Նույն տեղում, էջ 11:

³³ «Համբավաբեր», Թիֆլիս, 10 ապրիլի 1916, № 16, էջ 507:

հիշում «Միտնը հայրենի»՝ ուխտելով «չերգել բնավ, քանի հողը գերի է մեր. ... քանի մեջն ենք մենք գերության»: Իսկ Թումանյանի բանաստեղծության մեջ գերիները երգում են: Նրանց երգը հայրենիքին հավատարիմ մնալու երդում է ու վրեժի կոչ: Այդ երգից հետո գերեվարողները զարմանքով նկատում են, որ անկարող են սպանել գերյալների ոգին: Դա լիովին բացատրվում է Թումանյանի այդ տարիների հոգեվիճակով: Լինելով 1915-ին երիտթուրքերի կազմակերպած հայերի ցեղասպանության ժամանակակիցն ու ականատեսը՝ Թումանյանը, նույնիսկ հայկական ջարդերից ու կոտորածներից հետո էլ, չէր կորցրել հավատը հայության ապագայի նկատմամբ: Այդ հավատն այլաբանորեն իր արձագանքն է գտել վերոհիշյալ բանաստեղծության հետևյալ տողերում, երբ գերիների երգելու ժամանակ.

... զարմանքով հարցնում էին գերիչները մեկմեկու.
- Մի՞ թե դեռ էլ կենդանի է Բարայելը աշխարհում,
Մի՞ թե նրան չըսպանեցինք պատերազմի դաշտերում...³⁴

Եզրափակելով մեր խոսքը, նշենք, որ Բայրոնը ազատ, ինքնիշխան, «համաշխարհային թախծի» անհատականություններ գովերգող ստեղծագործող էր: Այս առումով ուշագրավ են պատանի Բսահակյանի գրառումներն ու մտորումներն իր «Հիշատակարանում». «... և ունեմ համաշխարհային վիշտ, մեղանխուլիա...»³⁵, «Ես սիրում եմ ինքնությունություն, տարօրինակություն, անհատականություն, միապետ, միահեծան, ինքնիշխան... «ես» ունենալ տիգերի մեջ, աշխարհ ունենալ...»³⁶:

Ուսումնասիրելով հայ-անգլիական գրական առնչությունները՝ մենք նկատում ենք, որ շատ անգլիացի բանաստեղծներ (Ու. Շեքսպիր, Ռ. Բեռնս, «լճային դպրոցի» ներկայացուցիչներ՝ Լեյկիստներ, Թ. Մուր, Պ. Շելլի, Ջ. Բայրոն և այլն) են թարգմանվել հայերեն, բայց, այնուամենայնիվ, Բայրոնը անգլիացի, թերևս, միակ բանաստեղծն է, ով հայերի նկատմամբ ունեցած իր սիրո ու հարգանքի համար միշտ հիշվում է և արժանանում բարձր գնահատականի հայ իրականության մեջ:

Ինչպես իրավացիորեն նշում է Թ. Մեդվինը, «Մեծ բանաստեղծը ոչ մի երկրի չի պատկանում. նրա ստեղծագործությունները համընդհանուր սեփականություն են, իսկ հուշագրությունները՝ հասարակության համընդհանուր ժառանգություն»³⁷: Իրոք, թե՛ Բայրոնի ու Շեքսպիրի, թե՛ Բսահակյանի ու Թումանյանի, թե՛ մյուս մեծերի ստեղծագործությունները վաղուց արդեն դուրս են եկել ազգային նեղ շրջանակ

³⁴ Հ. Թումանյան. Երկերի ժողովածու տասը հատորով, հ. I, Երևան, 1988, էջ 285:

³⁵ Ա. Բսահակյան. Հիշատակարան, էջ 179:

³⁶ Նույն տեղում, էջ 45:

³⁷ Thomas Medwin. Journal of the Conversations of Lord Byron, noted during a residence with his lordship at Pisa, in the years 1821 and 1822, in two volumes, vol. 1, Paris, published by L. Baudry, at the English, Italian, German, and Spanish library, rue du coq Saint-Honoré, 1825, p. XXI.

ներից և դարձել համընդհանուր սեփականություն՝ պատկանելով աշխարհի բոլոր ժողովուրդներին ու զարդարելով համաշխարհային գրականության էջերը:

ЭПИЗОДЫ ПРОЯВЛЕНИЯ БАЙРОНИЗМА В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

АНАИТ БЕКАРЯН

Р е з ю м е

Свободолюбивые настроения, романтизм справедливой борьбы, гуманизм и оптимизм поэзии Байрона волновали умы и сердца армянских писателей. Творчество Байрона оказало большое и благотворное влияние на армянских писателей, а посему в развитии мирового байронизма армянский байронизм занимает особую нишу. Проникнув в армянскую литературу, байронизм успешно развивался на протяжении долгих десятилетий, находя отражение как в мировоззрении, так и в оригинальном творчестве и в переводах армянских писателей. В армянской поэзии можно найти многие эпизоды проявления байронизма, а также выявить многочисленные типологические подобию между произведениями и героями Байрона и Шахазиза, Туманяна, Исаакяна и других.

THE REFLECTION OF BYRONISM IN THE ARMENIAN LITERATURE

ANAHIT BEKARYAN

S u m m a r y

Lord Byron's freedom-oriented poetry, full of romantic strive for justice, humanism and optimism excited both the minds and hearts of Armenian writers. Armenian writers were greatly impressed by Byron's literary activities, and within the framework of world Byronism Armenian Byronism has its unique place. Having penetrated into the Armenian literature, Byronism was mirrored both in the world outlook and the literary activities of the Armenian writers. One can not only come across frequent reflections of Byronism in the Armenian poetry but can also see the similarities between the works and heroes by Byron, Shahaziz, Toumanyanyan, Issahakyan and others.